

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتاك** جريدة يومية سياسية وأدبية - الدورية للثقافة والإعلامية

1500 L.Ռ. 75ԲԳ՝ ՏԱՐԻ, ԹԻԻ 174 (21224) ՈՒՐԱԿՆԵՐ 4 ՀՈՎՏԵՄԵՐ 2002 10 ԷՁ

ԻՐԱՆ - ՔՈՒԷՅԹ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Իրանի պիտուրական գործակցության համաձայնագիրը ստորագրեց Քուէյթի հետ: 1979ի իսլամական յեղափոխությունէն ետք, առաջին անգամ ըլլալով նման համաձայնագիրը ստորագրող իսլամական հանրապետութեան եւ Արեւմուտքի համակիր Օճի երկիրներէն մէկուն միջեւ:
Իրանի պաշտպանութեան նախարար ծովակալ Ալի Շամիանի քուէյթցի իր պաշտօնակիցին հետ ստորագրեց համաձայնագիրը: Շամիանի ըսաւ, որ համաձայնագիրը կը շեշտէ կարեւորութիւնը պիտուրական մասնագէտներու փոխանակման, ռազմափորձերու, ինչպէս նաեւ՝ պիտուրական մարտի մէջ անէն ձեռք գործակցութեան:
Իրան եւ Օճի մէջ անոր արաբ դրացիները տարին երէ ի վեր տարակարծիք եւ շրջանիկ ապահովութեան առնչուող հարցերուն մասին: Իրան յատկապէս լարուած յարաբերութիւններ ունէր Քուէյթի հետ, որ ի նպաստ Իրաքի դիրքորոշումով էր 1980 - 1988ի պատերազմին:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԵՊՔԵՐԵՆ ՄԻԱԿ ՕԳՏՈՒՈՂԸ ԻՍՐԱՅԵԼՆԵ

Կ'ԸՍԵ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ

Նախագահ Կօր. Էմիլ Լահուտ երէկ մտահոգութիւն յայտնեց Իրաքի դէմ գործադրուելիք պիտուրական որեւէ գործողութեան համար, որովհետեւ անիկա պիտի վտանգէ Միջին Արեւելքի կարգ մը երկիրներու ապահովութիւնը եւ կայունութիւնը, ինչպէս նաեւ իր ժխտական ազդեցութիւնը պիտի ձգէ արաբեւամերիկեան յարաբերութիւններուն վրայ:

Պապատայի մէջ ընդունեց Պրապիլի արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Օսմար Վլատիմիր Կոֆին, որուն կ'ընկերակցէր Լիբանանի մէջ Պրապիլի նոր դեսպան Մարքուս Քամաչօ տէ Պինչենյի:
Հանդիպումին նախագահ Լահուտ հաւաստեց, որ Միջին Արեւելքի մէջ պատահած դէպքերէն միակ օգտուողը Իսրայէլն է, որ ամէն բնարարք ի գործ կը դնէ Պաղեստինի կամ արաբական որեւէ երկրի դէմ: «Իսրայէլ օգտագործած է 11 Սեպտեմբեր 2001ի դէպքերը, որպէսզի պարտադրէ թշնամական իր բնութարանը: Այսօր ան կը փորձէ օգտագործել Իրաքի դէմ կատարուած ամերիկեան սպառնալիքները, շարունակելու համար Պաղեստինը ուժեղացնելու իր քաղաքականութիւնը մինչեւ որ յիշեալ երկիրը վերածուի փլուտակի», ըսաւ ան:

Նախագահ Լահուտ վերահաստատեց, որ միջազգային որոշումները պէտք է գործադրուին, որովհետեւ ինչպէս Իրաքի հարցով միջազգային ընտանիքէն միջազգային որոշումներու գործադրութեան պահանջ կայ, նոյնպէս պահանջ կայ միջխարեւելեան տազնապին վերաբերեալ տրուած միջազգային որոշումներուն գործադրութիւնը: Իսկ նշեալ որոշումներու գործադրութեան գծով որեւէ յապաղում կը վտանգէ ՄԱԿի չէկոքութիւնը:
Նախագահ Լահուտ Կոֆիի հետ քննարկեց Պրապիլի մէջ կայացած Արաբական վեհաժողովին տուած որոշումները, յատկապէս՝ խաղաղութեան արաբական նախաձեռնութիւնը, որ Իսրայէլի կը պարտադրէ պատասխանատու ըլլալ եւ ընդունիլ պաղեստինցիներուն դէմ կատարած իր բռնարարքները:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ - ԿԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի, որուն հետ քննարկումի առարկայ դարձուց ընդհանրապէս Մեթնի, եւ մասնաւորաբար էլ շրջափակի եւ Պուրճ Համուտի կենսոլորտի ապականման հարցերը:
Նախարար Յովնանեան արծարծեց կարգ մը հարցեր, ինչպէս՝ Պուրճ Համուտի ծովագերքը հաստատուած ձուկի շուկայի, սպանդանոցին եւ կաշիներու գործարաններուն պատճառած ապականումը, ինչպէս նաեւ կոլուզիներու եւ փակուած աղբանոցին գարշահոտին պարագան:
Նախարար Յովնանեան նկատել տուաւ, որ այս հարցերուն պատճառով շրջանին մէջ կը յառաջանան առողջապահական հարցեր: Ան նաեւ նշեց Պուրճ Համուտի եւ Պէյրութի քաղաքապետութիւններուն միջեւ գործակցութեան անհրաժեշտութիւնը՝ այս հարցերուն լուծումներ գտնելու հետեւեալ արով:
Վարչապետ Հարիրի հասկացողութիւնն ցուցաբերեց արծարծուած հարցերուն նկատմամբ եւ համաձայն գտնուեցաւ, որ անոնք ստանան արագ եւ առօրինակ լուծումներ:
Երկարատեւ լուծումներու համար՝ անհրաժեշտ համարուեցաւ համապարփակ ուսումնասիրութիւն մը պատրաստել:

ՄԱՐՈՒԱՆ ՊԱՐՂՈՒԹԻ Կ'ԱՐՇԱՄԱՐՇԷ ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԱՏԵԱՆԸ

Պաղեստինցի ղեկավար Մարուան Պարզութի, որ երէկ երրորդ անգամ ըլլալով դատարան ներկայացաւ, վերստին պոռաց, թէ Իսրայէլ իրաւունք չունի զինք դատելու: Պարզութի, որ ձերբակալուած էր Ապրիլին, դատարանին մէջ ըսաւ, որ Իսրայէլ գրաւող ուժ է եւ դատարանը զայն կը ներկայացնէ, հետեւաբար թէլ Աւիւի տեսանելի իրաւասութիւնը չունի զինք դատելու:
Պարզութի ամբաստանուած է իսրայէլացիներու դէմ յարձակումներ ծրագրելու եւ աւելի քան 26 իսրայէլացիի սպանութիւնը պատճառելու յանցանքով: Իսրայէլացի զօհերուն ընտանիքները, որոնք ներկայ էին դատարանը, իրենց կարգին Պարզութիի դէմ արտայայտութիւններ ունեցան:
Պարզութի պաղեստինցիներէն պահանջեց անտեսելու եւ չենթարկուելու իսրայէլեան բանակին հաստատած կրակմարի դրութեան: Ան պահանջեց նաեւ, որ պաղեստինցիները շարունակեն պայքարը Իսրայէլի դէմ:
Միւս կողմէ, իսրայէլեան օրաթերթ մը հաղորդեց, որ իսրայէլեան ուժեր քանի մը շարքով առաջ փոր-

ձարկած են Եսաէր Արաֆաթը պաղեստինեան շրջաններէն արտաքսելու գործողութիւն մը: Ապահովութեան ուժերը հաստատեցին, որ կեղծ գործողութիւն մը կատարած են: Անոնք սակայն մանրամասնութիւններ չփոխանցեցին:
Պաղեստինցի պաշտօնատարներ դիտել տուին, որ «Մաարի»-ի մէջ լոյս տեսած տեղեկութիւնները կը հաստատեն, թէ Իսրայէլ իսկապէս կ'ուզէ արտաքսել պաղեստինեան իշխանութեան նախագահը:
«Մաարի»-ի հաղորդած լուրին համաձայն, իսրայէլեան բանակին կողմէ փորձարկուած գործողութիւնը կը նպատակադրէ Արաֆաթը ուղղաթիւով «փախցնել» ու զայն տանիլ «հեռու ու մեկուսացուած» վայր մը, որ հաւանաբար Լիպիա կամ արաբական այլ երկիր մը կրնայ ըլլալ, որ Իսրայէլի հետ կապեր չունի:
Պաղեստինցի զինաւոր բանագնաց Սաէպ Ուրալ-թաթ կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ անմիջապէս միջամտելու եւ Իսրայէլէն բացատրութիւն պահանջելու:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄԵԾԱԳՈՅՆ ՈՒԺԵՐԸ ՏԱՐԱԿԱՐԾԻՔ՝ ԻՐԱՔԻ ԴԵՄ ՈՐԴԵԳՐՈՒԵԼԻՔ ՔԱՅԼԵՐՈՒՆ ՇՈՒՐՁ

Աշխարհի մեծագոյն ուժերը նկատուող երկիրները տարակարծիք են Իրաքի հանդէպ որդեգրուելիք քաղաքականութեան մէջ միջոցառումներուն մասին: ՄԵԾ ճակատի վրայ կանգնած են Միացեալ Նահանգներ ու Բրիտանիա, որոնք հաստատ կը մնան անգիշտ կեցուածքով վրայ, մինչ հակառակ ճակատի վրայ ուժերը համախմբած են Ռուսիա, Չինաստան եւ Ֆրանսա, որոնք կը նախընտրեն խաղաղ միջոցներով լուծել տագնապը, առիթ տալով դիւանագիտական ճիգերուն եւ ՄԱԿի հովանաւորած գէնըի

քննութիւններուն:
Միացեալ Նահանգներ տակաւին չեն յաջողած համոզել ոչ միայն Ապահովութեան Խորհուրդի մեջնալու անդամները, այլեւ՝ ՕԹԱՆի իրենց դաշնակիցներն ումանք, որոնք կը մերժեն Իրաքի դէմ զինուորական գործողութիւն մը, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի որոշումով չէ: Ուաշինգթոն երկ անուղղակի մարտահրաւեր ուղղեց ՕԹԱՆի դաշնակիցներուն, որոնք վեհաժողով մը պիտի գումարեն Նոյեմբերին: Նախագահ Ծորճ Պուշի ազգային անվտանգութեան հարցերու փոխ խորհրդատու Սքեյթըն շեղուի ըսաւ, որ Փրակայի վեհաժողովին (Նոյեմբեր 21 - 22) ՕԹԱՆ պէտք է իր կեցուածքը յստակացնէ Իրաքի հանդէպ: Հետի կրկնեց Պուշի խօսքերը, ըստ որոնց Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի իշխանութիւնը կը սպառնայ ՕԹԱՆի բոլոր երկիրներուն ապահովութեան: Հետեւաբար, ՕԹԱՆի իրաքացիիք երկիրի մարտահրաւեր կ'ուղղուի եթէ ոչ ուղղակի, այլ՝ անուղղակի կերպով: Հետի անցուց, որ վեհաժողովը առիթը պիտի ընծայէ ցոյց տալու դաշնակից երկիրներուն միասնականութիւնն ու միացեալ կեցուածքը իրաքեան սպառնալիքին դիմաց:
Հետի յայտարարութեան հակադրութեան ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար Ծորճ Ռոպըրթսըն եւ Նորվեկիոյ պաշտպանութեան նախարար Քրիսթին Քրոնի Տիվոլտ, որոնք դիտել տուին, որ Միացեալ Նահանգներ ՕԹԱՆի ճամբով պէտք է բանակցութիւններ կատարեն Երուսաղիմ իրենց դաշնակից երկիրներուն հետ, այլապէս՝ կազմակերպութիւնը լուսանցքի վրայ պիտի մնայ՝ կորսնցնելով իր կարելիութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱԽԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Եւրոպական խորհուրդի մարզկային իրաւանց հարցերու յանձնակատար Ալվարէս Նիլ Ռոպլէսը:
Հանդիպումին ընթացքին կողմերը քննարկեցին Հայաստանի մէջ մարդկային իրաւանց պաշտպանութեան առնչուող հարցեր: Քոչարեան եւ Ռոպլէս նաեւ անդրադարձան Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման հետեւեալներուն եւ շրջանին մէջ տեղի ունեցող գործընթացներուն:
Եւրոպացի պատուիրակը երէկ նաեւ այցելեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի: Ռոպլէս, որ շրջան կը գտնուի մանրամասնօրէն ծանօթանալու համար հարաւային կողմից երեք պետութիւններուն մէջ մարդկային իրաւանց կապուած խնդիրներուն եւ Եւրոպական խորհուրդին հանդէպ անոնց ստանձնած պարտաւորութիւններուն, Օսկանեանի հետ հանդիպումին ընթացքին յայտնեց, որ Հայաստան գարգացում արձանագրած է թէ մարդկային իրաւանց պաշտպանութեան եւ թէ պարտաւորութիւններու կատարման մէջ: Ան սակայն ընդգծեց, թէ Եւրոպական խորհուրդին համար չափազանց կարեւոր է մահապատիժի ջնջումը: Հանդիպումին կողմերը նաեւ անդրադարձան շրջանային խնդիրներու, Լեռնային Ղարաբաղի տագնապին, ռուս - վրացական յարաբերութիւններուն եւ այլ հարցերու:

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Եւրոպական խորհուրդի մարզկային իրաւանց հարցերու յանձնակատար Ալվարէս Նիլ Ռոպլէսը:
Հանդիպումին ընթացքին կողմերը քննարկեցին Հայաստանի մէջ մարդկային իրաւանց պաշտպանութեան առնչուող հարցեր: Քոչարեան եւ Ռոպլէս նաեւ անդրադարձան Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման հետեւեալներուն եւ շրջանին մէջ տեղի ունեցող գործընթացներուն:
Եւրոպացի պատուիրակը երէկ նաեւ այցելեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի: Ռոպլէս, որ շրջան կը գտնուի մանրամասնօրէն ծանօթանալու համար հարաւային կողմից երեք պետութիւններուն մէջ մարդկային իրաւանց կապուած խնդիրներուն եւ Եւրոպական խորհուրդին հանդէպ անոնց ստանձնած պարտաւորութիւններուն, Օսկանեանի հետ հանդիպումին ընթացքին յայտնեց, որ Հայաստան գարգացում արձանագրած է թէ մարդկային իրաւանց պաշտպանութեան եւ թէ պարտաւորութիւններու կատարման մէջ: Ան սակայն ընդգծեց, թէ Եւրոպական խորհուրդին համար չափազանց կարեւոր է մահապատիժի ջնջումը: Հանդիպումին կողմերը նաեւ անդրադարձան շրջանային խնդիրներու, Լեռնային Ղարաբաղի տագնապին, ռուս - վրացական յարաբերութիւններուն եւ այլ հարցերու:

ՊԼԵՐ ՊԱՏԵՐԱԶՄ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ

Բրիտանիոյ վարչապետ եւ Ծորճ Պուշի սերտ գործակիցը՝ Թոնի Պլեր երրորդ քանի ուժով ապահովելու Իրաքը եւ տապալել Սատտամ Հիւսէյնը, եթէ դիւանագիտական ճիգերն ու ՄԱԿ չկարենան հա-

Ծար.՝ էջ 10

ՇՆՈՐՀԱԻՌԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ՝ Հ. Յ. Դ. ԼԻՔԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

«Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին բացման հանդիսութեան առիթով, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին կը շարունակէ ստանալ շնորհաւորական հեռագիրներ:
«Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» համալիրի շինարարութեան աւարտը մեծ իրագործում համարելով եւ պայն լիբանանահայ գաղութին համար հիմնական կեդրոն նկատելով՝ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին լիբանանահայ գաղութին իրենց շնորհաւորութիւնները կը փոխանցեն՝ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինը, Հ. Յ. Դ. Քանաւայի, Արեւելեան Ամերիկայի, Ֆրանսայի, Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէները, Հ. Յ. Դ. Կիպրոսի Կոմիտէն, Իրանի Ազգային իշխանութիւնները, ինչպէս նաեւ Համազգայինի Մարտիի մասնաճիւղը:

Նախագահ Լահուտ նշեց, որ Լիբանանի կայունութիւնը երկիրը կը դարձնէ անտարակալականութիւնը եւ պրապիլցի ներդրողներու կեդրոնի մը:
Կոֆի նախագահ Լահուտի ներկայացուց միջին արեւելեան իր շրջապատը, որ կ'ընդգրկէ Լիբանանը, Սուրիան եւ Եգիպտոսը եւ որուն նպատակն է քննարկել շրջանային ընդհանուր կացութիւնը:
Նախագահական պալատի հիւրը դարձաւ նաեւ արդարադատութեան նախարար Սամիր Շարք, որ նախագահ Լահուտի ներ-

Ծար.՝ էջ 2

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՍՄԱՆ ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈԼԱՐՈՎ ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

10,25%* տարեկան տոկոսով

*Նուազագոյն մասնակցութիւն՝ 3000\$
*3 տարուան մասնակցութեան տեսողութեամբ
*Տոկոսը կը վճարուի իւրաքանչիւր 6 ամիսը անգամ մը:

**Հեռ.- 01/745660
01/248997**

بنك التمويل ش.م.ل. Finance Bank s.a.l.

Տարածուող Պեճ - Գլխաւոր կեդրոն՝ Եւրոպ, Ապոլո Ազիզ փողոց, «Ռոքրա» շէնք, Ա. Երկր: Տարածուող Պեճ - Գլխաւոր կեդրոն՝ «Մար Եւուէֆ» փողոց, «Շոքրայէլ» շէնք, Ա. Երկր:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Նախարարաց Խորհուրդը երեկ գումարեց իր ընթացիկ նիստը Թանգարանի իր կեդրոնա- տեղիին մէջ, գլխավորութեամբ նախագահ Կոր- Էմի Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Ժողովէն կը բացակայէին փոխ վարչապետ Խամ Ֆարես, եւ նախարար- ներ Թալալ Արալան, Խալիլ Հրատուի, Մահմուտ Համուտ եւ Դալի Արիսի:

Ժողովէն առաջ նախագահ Լահուտ եւ վար- չապետ Հարիրի ունեցան շուրջ կէս ժամուան դռնփակ հանդիպում մը:

Ժողովը դատապարտեց Երուսաղէմը Իսրա- յէլի մայրաքաղաք նկատելու ամերիկեան Քոնկրէսին որոշումը՝ վերահաստատելով, որ Երուսաղէմը կը պատկանի արաբներուն:

Կայծուեցաւ յանձնարումը մը, որ պիտի ու- սումնասիրէ հաշուապահութեան վերաբերեալ օրէնքի ծրագիրը մը, ինչպէս նաեւ այլ օրինա- գիծ մը՝ պետութեան հետ քաղաքացիին յարա- բերութիւնը ճիշդ ուղիի մէջ դնելու նպատա- կով:

Կառավարութիւնը չքննարկեց ընտրական նոր օրէնքի մշակման հարցը, ինչպէս նաեւ չանդարդարձաւ նախարարներ Տուատ Սի- նիորայի եւ Պասէլ Ֆելիանի Միացեալ Նա- հանգներ աշխատանքային այցելութեան ար- դիւնքներուն, սակայն նշուեցաւ, որ այցելու- թիւնը դրական եղած է:

Յառաջիկայ Հինգշաբթի կառավարութիւնը իր ընթացիկ նիստը պիտի չգումարէ, վարչա- պետ Հարիրիի ձափոն կատարելիք պաշտօնա- կան այցելութեան պատճառով:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԵՆՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ Քրոնիքսի մէջ ընդունեց «Միտրի Իսթ» օդանային ընկերութեան նա- խագահ Մոհամմէտ Հուրի, որուն հետ ըննարկեց նշեալ ընկերութեան առըն- չուած հարցեր:

Հուրի յայտնեց, որ 26 տարուան ընթացքին առաջին անգամ ըլլա- լով է, որ 2002 տարեշրջանին ըն- կերութիւնը նիւթական կորուստ- ներ չէ արձանագրած շնորհիւ ամ- րան աշխատանքի աշխուժութեան:

Հուրի վարչապետ Հարիրիի փո- խանցեց նաեւ Ֆրանսախօս Եր- կիրներու վեհաժողովին առիթով ընկերութեան որդեգրած ծրագիր- ները՝ յաջողցնելու համար նշեալ վեհաժողովը:

«Էրպաս» օդանայերը ստանձ- նելու մասին հարցումը մը պա- տասխանելով՝ Հուրի ըսաւ, որ առա-

ջին «Էրպաս» օդանայը ընկերու- թեան պիտի հասնի յառաջիկայ Փետրուարին, իսկ մինչեւ Յունիս արդէն իսկ ընկերութիւնը ստանձ- նած պիտի ըլլայ բոլոր նոր «Էր- պաս» օդանայերը:

Վարչապետ Հարիրի այցելեց նաեւ նախկին երեսփոխան Թամ- մալ Սայալ: Բննարկուեցան ընդ- հանուր հարցեր՝ յատկապէս Լիբա- նանի ընկերային եւ տնտեսական մարզին առնչուած:

Հանդիպումին շեշտուեցաւ քա- ղաքական ուժերու միջեւ երկխօ- սութեան անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ Թաէֆի համաձայնա- գիրին հիման վրայ աշխատանքը, որովհետեւ այդ համաձայնութիւնն է, որ կը հետապնդէ պզգային միացեալ շահեր առանց համայն- քային յարուած դրութեան մը գո- յութեան:

ԸՆՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔԸ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Խորհրդարանի նա- խագահ Նեալի Պրերի երեկ Այն էլ Թինէի մէջ ընդունեց ներքին գոր- ծոց եւ քաղաքացիապետ- թեանց հարցերու նա- խարար Էլիաս Սըրը, որուն հետ քննարկեց ընտրական նոր օրէն- քի մշակման հարցը ամբողջ Լիբանանը մէջ ընտրաշրջանի վերա- ծելու ընտրանքը, ան սակայն յայտնեց, որ փոխանակած են կար- ծիքներ, առանց ման- րամասնօրէն քննար- կելու հարցը:

Հանդիպումէն ետք Սըրը շեշտեց, որ քրիս- տոնեաներու շահերը՝ ներկայ կացութեան մէջ կը պարտադրէ, որ անոնք դուրս գան ան- կիւններէ եւ հանդի- պումներէ ու ճակատա-

բաց պատրաստ ըլլան դիմագրաւելու երկրին մէջ ստեղծուած ապա- յին որեւէ հարց ու Կո- րակցին ապային ծրա- գիրներու:

Անդրադառնալով տարբեր կուսակցու- թիւներու կողմէ ներ- քին գործոց նախարա- ռութեան յղուած պա- նապան կարծիքներուն, Սըրը ըսաւ, որ միայն Քըրնէթ Շահուանի հանդիպումն է, որ իր կարծիքը կամ կեց- ւածքը չէ յայտարարած ընտրական նոր օրէն- քին որդեգրման կամ մշակման մասին:

Սըրը աւելցուց նաեւ, որ նախանցեալ օր Մա- ռոնի Եպիսկոպոսնե- ռու Խորհուրդին նիս- տին ետք հրապարակ- ւած հաղորդագրու-

ԵԼԵԿՏՐՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԳՐԱՒԱԾ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամմէտ Ապտէլ Համիտ Պայտունի գլխաւոր- րութեամբ երեկ գումարուեցաւ ժողով մը, որուն ներկայ էին ելեկտրականութեան ընկերութեան տնօրէնն ու այլ պատասխանատու պաշտօնա- տարներ:

Ժողովը քննարկեց ընկերութեան աշխա- տանքը վերաշխուժացնելու եւ բարգաւաճելու հեռանկարները եւ ընկերութեան կարիքները՝ գոհացնելու համար բոլոր քաղաքացիները:

Պայտուն յայտնեց, որ վերջերս ընկերու- թեան աշխատանքին մէջ կայ տուրքերու հա- ւաքման պզգայի յառաջդիմութիւն մը: Ան լսեց ընկերութեան դիմագրաւած դժուարութիւն- ներն ու կարիքները:

Անդրադառնալով ելեկտրականութեան ըն- կերութիւնը ապապետականացնելու աշխա- տանքին՝ Պայտուն նշեց, որ ապապետակա- նացման առաջին փուլին ընկերութեան 30 կամ 40 առ հարիւր միայն պիտի ապապետակա- նացուի, ինչ որ կը նշանակէ, թէ կառավարու- թիւնը պիտի մնայ հիմնական գործակիցը այս մարզին եւ առաջին փուլը պիտի երկարի երեք տարիէն հինգ տարի. սա կը նշանակէ, թէ կա- ռավարութիւնը բաժին ունի ընկերութեան մին- չէ 2006 կամ 2008:

Պայտուն յայտնեց նաեւ, որ ապապետակա- նացման ընթացքին ընկերութիւնը գործէ պիտի չարձակէ իր պաշտօնեաները, այլ պիտի հսկէ անոնց աշխատանքի բարելաման եւ մակար- ղակի բարձրացումին:

ՎԱՌԵԼԱՆԻԹԵՐՈՒ ՍԱԿԱՑՈՅՑ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհա- մմէտ Ապտէլ Համիտ Պայտունի որոշումով վառելա- նիւթի սակերը արձանագրեցին յաւելում եւ ստացան հետեւեալ պատկերը.

Առանց կապարի 98 օքթան պենզինի թիթեղը՝ 21.000 լ. ռ., առանց կապարի 95 օքթան պենզինի թիթեղը՝ 20.300 լ. ռ., առանց կապարի 92 օքթան պենզինի թի- թեղը՝ 20.000 լ. ռ., առանց կապարի 90 օքթան պենզին- նին թիթեղը՝ 19.900 լ. ռ., քարիւղի թիթեղը՝ 8.900 լ. ռ., իսկ մազութի թիթեղը՝ 8.100 լ. ռ. կի:

ՎԵՐԱՍՈՒՏ ԴՊՐԵՎԱՆԵՐ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրե- վանքի տեսչութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, որ յառաջիկայ օրերուն պիտի վերաբանայ իր դռնե- րը՝ սկսելու համար 73րդ ուսումնական - կրթական տարեշրջանը: Ան այդ. կը հրակիւրեց մեր բոլոր հին թէ նոր սաները՝ իրենց ծնողներուն հետ մերկայանա- լու դպրեվանքի տեսչութեան, Պիթֆայա, առաւելա- գոյնը Հինգշաբթի, 10 Հոկտեմբերի առաւօտուն:

Վերջին առիթ մը եւս պիտի տրուի բոլոր անոնց, որոնք կը փափաքին դպրեվանքի սան դառնալ, ներ- կայանալու տեսչութեան եւ մուտքի քննութիւն անցը- նելու, մինչեւ յառաջիկայ Հինգշաբթի, 10 Հոկտեմ- բեր:

Ներկայացող թեկնածուները պարտին իրենց հետ բերել.

- 1.- Բարի վարուց վկայագիր՝ ծխատեղ քահանա- յեն:
- 2.- Շատախաղի՝ դպրոցի տնօրէնութենէն:
- 3.- Վերջին տարուան վիճակագրոյցը:
- 4.- Բժշկական վկայագիր:
- 5.- Անձնաթուղթի եւ քննակազմի տետրակի (տաֆ- րար աղէկի) լուսապատճենը:
- 6.- Երկու գումարու լուսանկար:



BYBLOS INSTITUTE TECHNICAL INSTITUTE

TECHNICAL BACCALAUREAT - BT SUPERIOR TECHNICAN - TS

- Computer & Accountancy
- Sales & Commercial Relationships
- Electronics
- Car Mechanics
- Preschool Education
- Expert Accountant
- Computer Science
- Business Administration & Marketing

SPECIALIZATION TECHNOLOGY - TDS

- General Accountancy
- Chief accountant
- Executive secretary
- Esthetics & Make-up
- Computer Technology
- Electronics (T.V. & Cellular)
- Mechanics & Car Electronics
- Car Diagnostics Technology
- Electricity - Refrigeration

Haret Horeik 01 273863 Dora 01 894600 Furn-El-Cheback 01 293175

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Կայացուց Լիբանանի մէջ յառաջիկայ 24 եւ 25 Հոկտեմբերին կայանա- յիք արաբ արդարադա- տութեան նախարարնե- ռու Լիբն խորհրդակցու- վի մանրամասնութիւն- ները:

Բննարկուեցան նա- եւ արդարադատու- թեան նախարարու- թեան առնչուած հար- ցեր, ինչպէս դատա- խապներու ընտրութիւն եւ դատաւարութեան նոր օրէնքներու եւ ձե- լերու տնօրինում:

Նախագահ Լահուտի այցելեց երեսփոխան Անթունի Հատատ: Բննարկուեցան Մեթն շրջանի կարիքները:

Նախագահ Լահուտ ընդունեց երեսփոխան Նատէր Սուրբարը, որուն հետ քննարկեց երկրի ներկայ իրա- դարձութիւնները, խորհրդակցական հան- դիպումի տեսակցու- թիւնները քաղաքական ուժերուն հետ, ինչպէս նաեւ Պեքաս շրջանի կարիքները:

Նախագահ Լահուտ ընդունեց բանակի հրամանատար Կոր. Միշէլ Սլէյմանը, որուն հետ քննարկեց բանա- կին եւ երկրին ապահո- վական վիճակը: Նախագահ Լահուտի այցելեցին նաեւ Այն

Ուա Չայն հիւանդանո- ցի տնօրէն Զուհէր Իմատ, որուն կ'ընկե- րակցէր ֆրանսական պատուիրակութիւն մը:

Հ ա ն դ ի պ ու մ ի ն քննարկուեցան ընկե- րային եւ առողջապա- հական ծիրէն ներս լի- բանանեան եւ ֆրան- սական հիւանդանոց- ներու միջեւ յարաբե- րութիւններն ու գոր- ծակցութիւնը:

«ԿԵԼԻԿԵԱ» ԹԱՆԳԱՐԱՆ ԱՆԹԻԼԵԱՍ ՀԱՅՎԱԶՁԵԱՆ ՀԱՄԼԱՍԱՐԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՊԹՈՆ

THE ORTHODOX CENTER FOR DIALOGUE AND EXCHANGE THE ORTHODOX ARCHDIOCESE OF BEIRUT

ST. JOHN OF DAMASCUS INSTITUTE OF THEOLOGY THE UNIVERSITY OF BALAMAND

ՀԱՅ ՄԻՋՆԱԳՐԱԵԱՆ ԱՐՈՒԵՍԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՇԱՐԸ

Դասախօս՝ ՓՐՈՑ. ԼԵՒՈՆ ՉՈՒԳԱՍՁԵԱՆ (Երեւանի Պետական համալսարանի Հայ Արուեստի Պատմութեան ամպիոնի վարիչ)

Երեքշաբթի, 8 Հոկտեմբեր 2002 «ԹՈՐՈՍ ՈՈՍԼԻՆԻ ԱՐՈՒԵՍԵ ԵՒ ՆՐԱ ՅՈՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅՈՐԱԿԻՑ ՄՃԱԿՈՅՑՆԵՐԻ ԸՏՏ» Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, «Կիլի- կիա» թանգարան, երեկոյեան ժամը 7:30ին

Հինգշաբթի, 10 Հոկտեմբեր 2002 «ARMENIAN ART AND ITS RELATIONSHIP TO BYZ- ANTINE ART» Պալամանոյի Ս. Աստուածածոր պատրիարքական վանք, Զուրա, մեծ հանդիսարան, երեկոյեան ժամը 6:30ին

Ուրբաթ, 11 Հոկտեմբեր 2002 «ARMENIAN ART AND ITS RELATIONSHIP TO BYZ- ANTINE ART» Պալամանի հանդիսարան, Պալամանոյի համա- լսարան, Առողջապահական Գիտութիւններու Բաժան- մունք, Էշրեֆիէ, «Սէն Շորժ» հիւանդանոցի դի- մաց, երեկոյեան ժամը 6:00ին

Երեքշաբթի, 15 Հոկտեմբեր 2002 «THE MONGOL PERIOD AS REFLECTED IN ARMEN- IAN ART» Հայկազեան համալսարանի հանդիսարան, Մեք- սիք փողոց, Բանթարի, երեկոյեան ժամը 7:30ին:

ԾԱԽՈՒ ԅՈՐԿԱՐԱՄԻՆ

• Անթիլիաս, Մզերի շրջան, 135 քառ. մետր, գե- դատեպիլ դիրք. հեռ. 03- 512774:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

• Ֆրանսերէն լեզուով՝ բոլոր կարգերու համար: Ընդ. 03-901281:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

• Միջնակարգ դասա- րաններու աշակերտներու համար (բացի ֆրանսերե- նէ): Դիմել հեռ. 03 - 919788:

ԱՌԱՋԻՆ ՔԱՐԻ ԼՈՒՅՑՈՒՄ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Յուրախութիւն Ս. Վարդանանց եկեղեցւոյ ծխա- կաններուն եւ մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդին, կը յայտարարենք, թէ Սրբոց Վարդանանց Գոր- թակառոյց եկեղեցւոյ ամբողջացման եւ բարեկարգ- ման աշխատանքը սկսած է արդէն:
Այս առիթով արտաքին քարապատումի առաջին քարի լուսացումն ու օրհնութիւնը պիտի կատարուի այս Կիրակի, 6 Հոկտեմբեր 2002, ժամը 10:30ին, յընթաց Ս. պատարագի, ձեռամբ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի

Կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ մեր- կայ ըլլալու հոգեպարար սոյն արարողութեան, աղօ- քելու աշխատանքներու բարոյք ընթացքին եւ եկե- ղեցւոյ բարեկարգման գործին ամբողջացման հա- մար:

ԹԱՆԳԱՐԱՆ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՐԿԱՉ» ԵՐԳՉԱԽՈՒՄԸ
ՎԵՐՍՎՈՒՄ ԵՐԳՉԱԽՈՒՄԻ ՓՈՐՁԵՐՈՒ
Գեղ. դեկավար եւ խմբավար՝ **ԶԱԲԱՐ ԲԵՇԻՇԵԱՆ**
Մանկական խումբ. Ա. - Գ. դասարանի աշա- կերտներ, Շաբաթ կեսօրէ ետք ժամը 3:00էն 4:00: Պատանեկան խումբ. Դ. - Ե. դասարանի աշա- կերտներ, Ուրբաթ կեսօրէ ետք ժամը 4:00էն 6:00: Շաբաթ առաւօտեան ժամը 10:00էն 12:00: Երեք պատանեկան խումբ. Ը. - ԺԲ. դասարանի աշակերտներ, Ուրբաթ երեկոյեան ժամը 6:30էն 8:00: Նորեկներու անդամագրութեան համար դիմել խմբավարին՝ հեռաձայնելով 01-265899 եւ 03- 442365 թիւերուն:
Փորձերը տեղի կ'ունենան Համազգայինի «Լեւոն Շանթ» մշակութային կեդրոնին մէջ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՐԿԱՉ» ԵՐԳՉԱԽՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱԴՈՐ ՎԵՐԱՍՈՒՏ
Համազգայինի «Գայիանէ» պարարուեստի դպրոցի 2002 - 2003 տարեշրջանի վերամուտը պիտի սկսի հետեւեալ ժամանակացոյցով.
Ա. - 4րդ դասարան, Ուրբաթ, 4 Հոկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 6:00ին:
Բ. - Նորեկ աշակերտութեան համար (6 տարեկան եւ վեր) Շաբաթ, 5 Հոկտեմբեր 2002, կեսօրէ առաջ ժամը 11:00ին:
Գ. - Մնացեալ բոլոր դասարանները, Շաբաթ 5 Հոկտեմբեր, կեսօրուան ժամը 12:00ին:
Պարուսոյց՝ ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԵՄԻՆՈՒՅ. «Մոնօ» սրահին մէջ 2002 թուականի «Ընար» պարախումբին եւ «Գայիանէ» դպրոցի պարախումբին ելոյթներու փոստ - երիզները եւ լու- սանկարները կարելի է ստանալ միաւորի վարչութե- նէ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱԴՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՄՈՒՐ Է

Լիբանանեան պատերազմի աւարտով նոր էջ մը բացուեցաւ Լիբանանի հայութեան համար՝ քաղաքական, քե՛ ընկերային - մշակութային եւ քե՛ տնտեսական իմաստներով:

Լիբանանեան այլ համայնքներու նման, հայութիւնը ալ ենթարկուեցաւ ծանր վնասներու, գրեթէ բոլոր բնագաւառներուն մէջ, սկսելով բուռն կերպով իր պատկերէն մինչեւ կրթական եւ այլ մարզեր:

Լիբանանի հանդէպ իր հաւատքը, սակայն, ան երբեք չկորսնցուց: Զկորսնցուց նաեւ այն խոր համոզումը, քե՛ Լիբանանի հայութիւնը է՛ ու կը մնայ ոչ միայն Սփիւռքի հայութեան արիւնատար երակը, այլ նաեւ՝ Հայաստանի կողքին ամուր կանգնող կազմակերպիչ:

Տխուր բաներ կ'ըսուին Լիբանանի հայութեան մասին: Յոռետեսներ մանաւանդ շատ մուրթ գոյններով ու չափազանցած ձեւով կը ներկայացնեն անոր ներկայիս ու ապագան: Խոշորացողով կը դիտուին կատարուած սխալներն ու բացթողումները: Կը տեսնուին միայն տկարութիւններն ու ընկրկուները: Կը դիտուին միայն գաւառի պարսիք քաղաքները:

Անշուշտ սխալներ գործուած են: Անշուշտ երբեմն անհեռատես որոշումներ տրուած են:

Անշուշտ տկարութիւններ գոյութիւն ունին: Անշուշտ երբեմն առաջնահերթութիւններ շրջուած ունին:

Բայց Լիբանանի հայութիւնը կը մնայ եթէ ոչ անցեալի իր թիւով եւ ուժակնուրբամբ, բայց անտարակոյս համեմատական տրամաբանութեամբ մը եւ իրատես մօտեցումով, նոյնքան գորտուր եւ արդիւնաւոր ներկայ պայմաններուն մէջ:

Չենք կրնար սխալները մատնանշել՝ մոռնալով ճիշդ քայլերը:

Չենք կրնար խօսիլ անհեռատես որոշումներու մասին՝ անտեսելով արդար, ճիշդ, տեղին ու ապագայի տեսլականով տրուած առողջ որոշումները:

Չենք կրնար տկարութիւնները միայն տեսնել՝ մոռնալով ուժեղ կեցուածքներն ու որոշումները:

Չենք կրնար միայն քննադատել կարգ մը կառոյցներու տարբեր պատճառներով փակուած մը եւ չգնահատել նոր եւ ժամանակներու կարիքը լրացնող այլ կառոյցներու հաստատումը:

Անբարձեւ ճանաչուած տեսնել գաւառի լեցուն բաժինը: Տեսնել ոչ միայն մուրթ եւ անիծելի գայլ, այլ՝ վառելի մոմը եւ լուսաւորելի խաւարը:

Արագ ակնարկ մը՝ անցնող երկու տարիներու գաղութային մեր կեանքին վրայ եւ պիտի տեսնենք նուազումները անկասկած:

Շրջագայինք Լիբանանի հայահոծ մեր շրջաններուն մէջ ու անկասկած պիտի նկատենք, քե՛ իւրաքանչիւր շրջան նոր նուազում մը արձանագրած է:

Այնքանքան Թրիփոլի եւ Ժիպէյի, Տըպպայա, Անթիլիաս ու Զալքա, Պուրն Համուս եւ Պէյրութ պիտի նկատենք, որ հակառակ տնտեսական սուր տագնապին, Լիբանանի հայութիւնը միշտ նոր յոյսով տոգորուած իր կարելի չունէ կառոյցներ պահպանելու համար:

Բանք մեր թերթերը, տեսնենք կատարուած ձեռնարկներուն տարրուրիւնը, կարողանք տարբեր ուղղութիւններու հովանաւորութիւն վայելող հաստատութեանց շուրջ հրապարակուած տեղեկութիւններն ու պիտի համոզուինք, քե՛ ի՛նչ մեծ աշխատք կը շարունակուի տարուի:

Տնտեսական հսկայ բեռի տակ ինկած մեր գաղութի այս օրերուն առնենք մեր ձեռքը հաշուիչ մեքենան եւ կատարենք գումարումը անցնող երկու տարիներուն կուսակցական, մշակութային, կրօնական, մարզական, կրթական, բարեսիրական մեր հաստատութեանց կատարած ձեռնարկներուն եթէ հասոյթին, հաշուենք կատարուած մեծ քե՛ փորձ նուիրատուութիւնները՝ յայտնի կամ անյայտ նուիրատուներու կողմէ ու նշողները գումարը: Մեր հաշիւը կ'անցնի երեք միլիոն ամերիկեան տոլարը, ուրիշներ կրնան հաշուել նուազ կամ աւելի:

Բայց իրականութիւնը կը մնայ ուժեղ: Երբ կայ հաւատքը, կայ նուազում: Երբ կայ հաւաքական ճիշդ, կայ ստեղծագործութիւն:

Երբ կայ առաջնահերթութեան գիտակցութիւնը, կայ պայագայի հանդէպ սպասում: Երբ կայ յոյսը, կայ ե՛ւ տոկոսներութիւնը, ե՛ւ գոյատեւումի վճարակներութիւնը:

Լիբանանի հայութիւնը չէ՛ այն, ինչ որ էր երեսուն տարի առաջ:

Բայց նաեւ այն է՝ այսօր տակաւին այն յեղարանը, առանց որուն շատ բան կը քանդուի ամբողջ հայութեան մէջ:

Յանելեալ պրկումով, յանելեալ ուժակնուրբամբ, յանելեալ բժանջողութեամբ եւ աշխատանքով մենք կը պահենք մենք մեզ ու կը շարունակենք գործանալ:

Իւրաքանչիւր նոր նուազումի դիմաց կը մոռացուին տկարութիւնները: Իւրաքանչիւր հարուածի դիմաց կը կանգնի նոր եւ ամուր պատեղ մը:

Լիբանանի հայութիւնը, հարուստն ու աղքատը, հաւասարակա՛ն գիտեն արժեքը այս երկրին ու հայութեան:

Այդպէս եղած է եւ այդպէս ալ կը շարունակուի:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՆԱԽԱՐԱՐ ԴԱԻԹ ԼՈՔԵԱՆԻ ԸԱՍԱԶԱՅՆ

ՆՈՅՏԵՄԲԵՐԵԱՆԻ 1997Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՀԵՏՔԵՐԸ ՊԻՏԻ ԶՆՉՈՒԻՆ

Հայաստանի քաղաքաշինութեան նախարար Դաւիթ Լոքեան պատասխանելով լրագրողներու հարցումներուն՝ նշեց, որ նախագահ Ռ. Քոչարեան 28 Սեպտեմբերին Տաւուշի մարզ կատարած այցելութեան ընթացքին Նոյեմբերեանի մէջ ունեցած է խորհրդակցութիւն եւ յանձնարարած՝ 2003 թուականի առաջին կիսամեակին ապահովել Նոյեմբերեանի 1997 թուականի երկրաշարժին հետեւանքներուն վերացման համար անհրաժեշտ միջոցները:

Դ. Լոքեան նաեւ դիտել տուաւ, որ նախագահի հետ խորհրդակցութիւնը ընդգրկած է նաեւ Տաւուշի մարզի մէջ ռուսներէ տուժած 316 բնակարաններու (անոնցմէ 110ն հիմնադատակ քանդուած) տէրերը բնակարանով ապահովելու խնդիրը: Դ. Լոքեանի խօսքերով, անցած ամիսներուն Տաւուշէն 35 ընտանիք ստացած է բնակարան, այդ նպատակին համար կատարուած պետական պիւտճէի 90 միլիոն դրամի յատկացման շնորհիւ:

ՆԱԽԱՐԱՐ ԿԱՐԵՆ ԺԵՄԱՐԻՏԵԱՆԻ ՍԱՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՅՈՒՄ

Շարաթ, 28 Սեպտեմբերին, Կլենտէյլի «Սիվիլ Ինթերնոնալ»-ին մէջ բացուեցաւ Հայաստանեան արտադրանքներու «Էքսփօ-2002» ցուցահանդէսը:

Կլենտէյլի քաղաքապետ Րաֆֆի Մանուկեան եւ Հայաստանի առեւտուրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարէն Ժշմարեան կարեցին ժապաւէնը եւ ցուցահանդէսին մասնակցելու եկած հիւրերն ու այցելուները հրաւիրեցան ծանօթանալու աւելի քան 60 տարեալներուն մէջ ցուցադրուած Հայաստանեան արտադրանքներուն: Հիւրերուն շարքին էին Միացեալ Նահանգներու քոնկրէթական Ֆրէնք Փալոն, Լոս Անճելոսի գաւառի «Հէրիֆ» Լի Պաքա, Միացեալ Նահանգներու մօտ Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեան, Լոս Անճելոսի մօտ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Վալերի Միլոտովեան, Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամներ՝ Պապ Եւոլէֆեան, Տէյվ Ուիլքոք, Ֆրէնք Քուրիթթերո եւ Կաս Կոմէյ, ինչպէս նաեւ՝ Հայաստանէն՝ այս արեւմտի Հասած պատուիրակութեան անդամներ եւ գործարարներ:

Պէտք է նշել, որ այս տարի տարբեր տեսակի քոնկրէթներու, օղիներու, գինիներու, հանքային ջուրերու կողքին բաւական տեղ յատկացուած էր գեղանկարչական աշխատանքներուն եւ քանդակներուն, որոնք հետաքրքրութիւն յառաջացուցին այցելուներուն մօտ:

Աւելցնենք, որ «Էքսփօ-2002»-ի բացումէն երկու օր առաջ Քալիֆորնիոյ նահանգապետ Կրէյ Տէյվիս ստորագրեց նահանգային ծերակուտական ձէք Սքաթի՝ Երեւանի մէջ Քալիֆորնիոյ առեւտրական գրասենեակ հիմնելու օրինագիծը: Այս օրինագիծին ապահովում ուղղութեամբ Հայ Դատի Յանձնախումբը աշխատանք կը տանէր աւելի քան երեք տարի է Վեր:

ՇԱԼԵՊ

ՀԱԼԷՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ Կ'ԱՅՅԵԼԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻԻ ՊԱՏՈՍԱՐԱՆ

Հայաստանի անկախութեան վերականգնման 11րդ տարեալին առիթով, 26 Սեպտեմբերին Հալէպի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոսարան այցելած է Հալէպի նահանգապետ Ուսամա Համէտ Ատի՝ Պասա Կուսակցութեան Հալէպի կազմակերպութեան քարտուղար Ապտ Ղաֆուր Սապուդինի ուղեկցութեամբ: Սուրիական պատուիրակութեան ընդունած են Սուրիոյ եւ Յորդանանի մէջ Հայաստանի դեսպան Լեւոն Մարգարեան եւ Հալէպի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Արմէն Մելքոնեան:

Հանդիպման ընթացքին կողմերը կարծիքներ փոխանակած են Հալէպի նահանգին հետ տարբեր ոլորտներու մէջ համագործակցութիւնը աշխուժացընելու շուրջ՝ նշելով միտաբանակ, որ Հալէպահայ համայնքը կրնայ դառնալ լրացուցիչ խթան հայաստանի արտադրանքներուն հետեւանքներուն հետեւանքներուն համար:

Հալէպի նահանգապետը շնորհակալութիւնով Հայաստանի դեսպանն ու գլխաւոր հիւպատոսը Հայաստանի անկախութեան տօնին առիթով, հայ ժողովուրդին յառաջընթաց եւ բարգաւաճում մտղթած է:


ԾԱՆՈՒՅՈՒՆՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիծը ընթերցիլ գիրով (հաստատութեանց պարագայի՝՝ անխառնարար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

«Բ Ա Գ Ի Ն»

(ԱՍՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԻ)

ԳԱՐՈՒՆ 2002, ԹԻԻ 2



Կը կարդանք՝ «Բագին» ամսագրի 2002 թուականի Գարուն թիւ 2 համարը, որ կը յատկանշէ ամսագրի ընթացքը, կողքին վրայ դրոշմուած պատկերացումով՝ 40ամեակ: Այս համարը կ'ընդգրկէ, ինչպէս միշտ, գրական երեք սեռերը՝ ներկայացնող երկեր. արձակ, բանաստեղծութիւն, թատերերկ: 160 էջերուն մօտաւորապէս մէկ երրորդը յատկացած է «Իմացական շարժում» եւ «Մշակութային անդրադարձներ» բաժիններուն:

Համարը կը բացուի 1984ին մահացած արձագիր Սուրէյ Սանինեանի մէջ հետաքրքրական պատմուածքով՝ «Տիկին Արեւմտեանի մահը» խորագրով: Ներկայացուած է Ս. Սանինեանի համառօտ կենսագրութիւնը, երախտաշատ յիշատակը եւ լոյս ընծայուելու սպասող իր անձնական ստեղծագործութիւններուն մասին ծանօթութիւն:

Այս համարով տպուած են երկու պատմուածքներ. Շահանդուխտի ստորագրութեամբ «Վերադարձ», ապա Թորոս Զիֆլեանի «Մարեմաթը», որուն թեման թուրք մարդուն դազանային տրամադրութեան մէկ ապացոյց է: Գրեթէ նոյն անունով թեման մէկ արձագրութեան մէջ արձագրութեան երկու մասերն են նաեւ Սանինեանի պատմութեամբ, որուն աւարտին կը պարզուի թուրք գարգացած անհատի մը անբարոյութեան եւ դաւաճողի կեցուածքին ներաշխարհը:

Բանաստեղծութիւններ ունին Փանոս Ժեբրանեան, քնարական շունչով գրուած, Վարանդա՝ «Դանթեական» վերնագրով հայ ժողովուրդին եղբարական ճակատագրին նուիրուած պոէմը:

Քերթողական գրականութեան բաժինին մէջ կը կարդանք Սոնիա Քիլիճեանի սիրային կենսագրութեան մասին: Սոնիա Քիլիճեանի սիրային կենսագրութեան մասին Մայրաքանդակ կեանքին ու ստեղծագործական ժառանգութեան մասին ընդարձակ տեղեկութիւններ տրուած են, Վազգէն Շուշանեանի տարիներու ներկայումս:

ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԳՈՂՈՒԹԵԱՆ ԳԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՀՐԱՏԱՊ

Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ ազդեցունանքներ նախորդ տարիներուն նման կը շարունակեն անասնազոգութիւնը: Վերջերս Տաւուշի շրջան տրուած այցելութեան մը ընթացքին Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան անդրադառնալով այս հարցին՝ հաւաստեց, որ անիկա մնալու կերպով ուղարկութեան առարկայ պիտի մնայ:

Մարզը յուզող հարցերէն մէկն է նաեւ ականներու զոյւղութեան հարցը: Տակաւին շրջանին մէջ մնացած են բազմաթիւ չականներ Նահանգներու տարածութիւններ եւ ըստ նախագահ Ռ. Քոչարեանի, գիւղապետներ չեն վարանի իրենց անհանգստութիւնը յայտնելու այս առնչութեամբ, որովհետեւ ականապատուած մնացած են նաեւ բաւական թերի հողեր:

Նշենք, որ ականագործման աշխատանքները ներկայիս կը կատարէ Միացեալ Նահանգներու արտադրութեամբ այս տարի ստեղծուած եւ Հայաստանի պաշտպանութեան նարարարութեան կազմին մէջ գործող ականագործման կեդրոնը:

Թիւն է «Բագին»-ի էջերուն: Այս համարով դարձեալ կը կարդանք իր սրտառու օրագրի ներքին մաս մը:

Հրանդ Մարգարեանի թատերական ստեղծագործութեան ներքին թատերերկին երկրորդ մասը: «Իմացական շարժում» բաժինը ճիշդ է այլապէս երեւոյթներ եւ լուրեր, ճշմարտութիւններ եւ վկայութիւններ բացայայտող երէկով: Նորութիւն մը բերած է երաժշտագէտ Պետրոս Ալազատյան, որուն կենսագրութեան մասին խմբագրութիւնը հակիրճ ծանօթութիւններ տալիս է, ներկայացուցած է երաժշտագէտին՝ երաժշտական հետազոտութիւններ իրագործող Պետրոս Ալազատյանի ստորագրութեամբ երկ մը, նուիրուած երկու տարիներ անտեսուած, անծանօթ մնացած տաղանդաւոր երաժիշտ արուեստագէտ, Հայաստանի մէջ ապրած ու ստեղծագործած Յարութիւն Դելլալեանի մասին, «Յ. Դելլալեան կամ նախապատերազմի կողմից խորագրով կոչուած մեթոդ» վերտառութեամբ: 18 էջեր գրուած է ուսումնասիրական - ծանօթագրական այս յոյժ հետաքրքրական երկը, որ արդարութիւն մը կ'ընէ խորհրդային օրերուն անտեսուած երաժիշտի մը յիշատակին յատկապէս:

11 Յունուար 2002ին մահացած համաբաւար, համաշխարհային ճանաչման տիրացած ֆիլմարտադրիչ Հանրի Վերնէօյի (Ալոտ Մայրաքանդակ կեանքին ու ստեղծագործական ժառանգութեան մասին ընդարձակ տեղեկութիւններ տրուած են, «Բագին»-ի Գարուն 2002ի համարը կը փակուի «Մշակութային լուրեր» բաժինով, ստացուած նոր գիրքերու արձանագրութեամբ:

Ինչպէս միշտ, այս համարով եւս «Բագին» ընթացողին կը ներկայանայ հարուստ եւ ուսանելի բովանդակութեամբ, սփիւռեալայ գրողներու ստեղծագործական նորագոյն երկերով:



Հրդ Արուեստ

ՀՈՒԿՎՈՒՄ ԵՒ ԺԱՊԱԲԵՆՆԵՐՈՒ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՇԻՆԵՐԸ

Անցնող ամիսներուն եւ մօտ ապագային ցուցադրուելիք ժապաւեններուն նկատառելի մասը կը ծանուցուին իրրեւ այս կամ այն մարզին մէջ քաղաքացի գործեր: Մեծ տառերով կատարուող այս յայտարարութիւններուն կարեւոր տոկոսը անշուշտ կը վերաբերի ժապաւեններու արձանագրած կամ արձանագրելիք նիւթական «աննախընթաց» իրադրո՞ւմներուն: Հետաքրքրական է այն երեւոյթը, որ նոյն եղանակին կամ մտանքով ընթացքին ցու-

ծառայի հոլիվուտեան ժապաւենները յաջող կամ ձախող, մեծ կամ փոքր կը նկատուին ըստ իրենց ապահոված մուտքերու գումարին: Եթէ ժապաւեն մը կըրցած է իր դրամագլուխէն եւ ակրնալուծած է շատ աւելի մեծ շահ ապահովել, ապա ան կը նկատուի ոչ միայն տարուան, այլ նաեւ «իր տեսակին լաւագոյն ժապաւեններէն մէկը»:

«Նիուգոլիթ» շաբաթաթերթին մէջ լոյս տեսած եւ շարժապատկերի աշխարհին նմանօրինակ հարցերը արծարծող յօդ-

նոր իրագործում մը: Այսպէս, «Սայնզ» ժապաւենը, որ յառաջիկայ շաբաթներուն պիտի ցուցադրուի լիբանանեան սրահներուն մէջ, Միլի Կիպուրնի գլխաւոր դերակատարութիւնը ունեցող ժապաւեններուն մէջ առաջին իսկ շաբաթավերջին ցարդ ամէնէն աւելի մուտք ապահոված ժապաւենն է: «Օսթին Փաուլըրը ին Կոլտմենպըր» մրցանիչներու այս մրցանքէն աւելի բարտաւոր դուրս եկած կը թուի ըլլալ:

Ան միաժամանակ «Իլլաժ»-ի թէ՛ կատակերգութեան մը ցարդ ամէնէն մեծ բացումը շաբաթուան եւ թէ՛ Յուլիս ամսուան մէջ ցուցադրութեան սկսող որեւէ ժապաւենի ամէնէն մեծ բացումը շաբաթուան եկամուտը: Իսկ համեմատաբար նուազ դրամագլուխով ճամբայ ելած «Մայլիլ Ֆէր Կրիթ Ռե-տիկ»-ը որ նոյնպէս յառաջիկայ շաբաթ պիտի սկսի ցուցադրուի Լիբանանի մէջ, արդէն արժանացած է բոլորին նախահին: «Մ. Նահանգներու թիւ մէկ կատակերգութիւնը» բացատրութեամբ ծանուցուող այս ժապաւենը հանդիսացած է բոլոր ժապաւեններու ամերիկեան յաւազոյն տարա ժապաւեններու ցանկին մէջ ամէնէն աւելի մնացած ժապաւենը:



